05.10.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
հոկտեմբերի 3-ի N 1632-Ն որոշման

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳ
ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ,ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ, ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են ռազմական դրության ժամանակ սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման և շրջանառության գործընթացների կանոնակարգման հետ կապված հարաբերությունները:

2. Ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման կազմակերպման գործընթացն իրականացնելու դեպքում՝

1) ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ առողջապահության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունները, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ համաձայնացնելով, մշակում են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների ներմուծմամբ և արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների ցանկը և ներմուծված ապրանքների ծավալները: Ցանկում պետք է ներառված լինեն NN 2 և 3 հավելվածներով հաստատված ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության պահանջարկի առնվազն գումարային 80 տոկոս ապահովող կազմակերպությունները.

2) ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ առողջապահության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունների, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից 2 օրվա ընթացքում

գույքագրվում են սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրությամբ և ներմուծմամբ զբաղվող տնտեսավարողների մոտ առկա պաշարները.

3) ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից տնտեսավարողներից 2 օրվա ընթացքում հավաքագրվում են սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների պլանավորված արտադրության և ներմուծման ծավալների ամսական գրաֆիկները.

4) ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունները, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, համագործակցելով սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրությամբ և ներմուծմամբ զբաղվող տնտեսավարողների հետ, ապահովում են այդ սննդամթերքի վաճառքը, ձեռքբերումը և շրջանառությունը,

5) ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրենց իրավասությունների շրջանակներում ապահովվում է սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրողների, ներմուծողների և վաճառքով զբաղվող տնտեսավարողների բնականոն գործունեությունը, անհրաժեշտության դեպքում ցուցաբերվում է համապատասխան աջակցություն և վերահսկողություն՝ շուրջօրյա աշխատանքային ռեժիմով աշխատելու նպատակով.

6) ՀՀ սննդամթերքի անվտանգության և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինների կողմից ապահովվում է սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրության և շրջանառության փուլերում դրանց որակի և անվտանգության նկատմամբ պետական վերահսկողությունը.

7) ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից իրականացվում է վերահսկողություն՝ սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի գների նկատմամբ և միջոցներ է ձեռնարկվում շուկայում հակամրցակցային գործողությունները կանխարգելելու ուղղությամբ.

8) անհրաժեշտության դեպքում ՀՀ ոստիկանության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և այլ պետական կառավարման մարմինների աշխատողների միջոցով սահմանվում է շուրջօրյա հերթապահություն՝ սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրության, պահման և վաճառքի օբյեկտներում:

3. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության տարածքից՝ սույն որոշման N 2 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված ապրանքների արտահանումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության թույլտվության հիման վրա:

4. Սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների քանակից և ազգաբնակչության սպառման անհրաժեշտ չափաքանակներից կախված՝ ՀՀ կառավարության որոշմամբ կարող են սահմանափակվել դրանց վաճառքի ծավալները՝ սահմանելով առևտրային կետերում մեկ անձին տվյալ սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների բացթողնման չափաքանակ:

5. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության տարածքում դեղորայքի արտադրություն և մեծածախ իրացում իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը ԱՏԳ ԱԱ 3004 ենթախմբում ընդգրկված դեղորայքի արտահանումն իրականացնում են ՀՀ առողջապահության նախարարության թույլտվության հիման վրա:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպություններն իրականացնում են սույն որոշման N 3 հավելվածով

հաստատված ցանկում ընդգրկված դեղորայքի տրամադրումը բժշկական կազմակերպություններին՝ ՀՀ առողջապահության նախարարության համաձայնությամբ:

7. ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը սույն որոշման N 3 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված դեղորայքի բաշխումն իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարի հանձնարարությամբ:

8. Բարեգործության նպատակով ստացված դեղորայքի ներմուծումն իրականացվում է ՀՀ կառավարության որոշմանը համապատասխան:

9. Սույն որոշման N 3 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված, սակայն Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղերի ներմուծումը օրենքով սահմանված կարգով թույլատրվում է միայն դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմայի և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ